Մրցույթ՝ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 7 ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ

«Ալավերդի համայնքի Ամալյա Կարապետյանի անվան թիվ 7 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ դաստիարակի (0,25 դրույք), ֆիզ.հրահանգչի (0,5 դրույք), հոգեբանի (1դրույք)պաշտոնների համար:

Դաստիարակի հաստիքի համար մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով ունի միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի հաստիքի համար մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով ունի միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ:

Հոգեբանի հաստիքի համար մրցույթին կարող է մասնակցել այն անձը,ով ունի բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ:

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1)՝լրացվում է տեղում,

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձև 4)՝

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթն անց է կացվելու 2026 թվականի փետրվարի 11–ին, ժամը 11:00-ին, ք. Ալավերդի Թբիլիսյան խճ. 5/2 հասցեում: Փաստաթղթերն պետք է ներկայացնել անձամբ՝անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի հունվարի 12–ից մինչև 2026թ-ի փետրվարի 9-ը ներառյալ, ամեն օր ժամը 08:30 - 17:30-ը, բացի շաբաթ և կիրակի

օրերից ք. Ալավերդի, Թբիլիսյան խճ. 5/2 հասցեում: Մրցույթն անց է կացվելու երկու փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/am/news/11978

Տեղեկությունների համար կարող եք զանգահարել +374 99 250 182 հեռախոսահամարով